ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2020թվականի N 31-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Այգեկ համայնքում 2020 թվականի սեպտեմբերի 30-ին կայացած հողատարածքի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Արմավիրի մարզի Այգեկ համայնքում 2020 թվականի սեպտեմբերի 30-ին կայացած 0,0681 հեկտար հողատարածքի (կադաստրային ծածկագիր՝ 04-009-0189-0004, հասցեն՝ Երևանյան խճուղի 1-ին նրբանցք 1) աճուրդային կարգով վաճառքի արդյունքներով կազմված արձանագրությունը:
2. Աճուրդում հաղթող ճանաչված Վազգեն Մարգարի Զեյնալյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ ներկայացնելով այն նոտարական վավերացման և պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Այգեկ համայնքի ղեկավար _____ **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2020թ. սեպտեմբերի 30
գ.Այգեկ